ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2015 թվականի N: 161 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 3-րդ ենթակետի, 15-րդ և 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2015 թվականի հուլիսի 8-ի նիստի թիվ 52 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կրասարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝ մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամ Լյուդմիլա Առաքելյանի լիազորությունները և նրա փոխարեն խորհրդի կազմում հաստատել Սրբուհի Հարությունյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N51-Ա որոշման N126 հավելվածում «Առաքելյան Լյուդմիլա» բառերը փոխարինել «Հարությունյան Սրբուհի» բառերով:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝